ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԱ

ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS
YEREVAN - 2016

ՆԵՍՏՈՐԻ ՊՐՈՍՈՊՈՆԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎՆ ԻԲՐԵՎ ՆՐԱ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐ

Հովհաննես Հովհաննիսյան

5-րդ դարի առաջին կեսին սկիզբ առած քրիստոսաբանական վիճաբանությունները շատ դեպքերում իրենցից ներկայացնում էին նեղ փիլիսոփայական աշխարհայացքների բախում, որը հաճախ չէր ընկալվում փիլիսոփայական-աստվածաբանական բանավեճերին անհաղորդ ժողովրդական լայն զանգվածների կողմից: Հաճախ էլ փիլիսոփայական վիճաբանությունների մեջ խորանալու առիթն առաջնային խնդիրների վրայից հասարակության կամ իշխանության ուշադրությունը շեղելն էր ու երկրորդային խնդիրների ձևակերպելն՝ իբրև առաջնային: Եկեղեցական վիճաբանությունների պատմության մեջ առավել գերիշխող են եղել քաղաքական հիմնահարցերը, այն է՝ տարածքային, իշխանության համար մղվող պայքարը, որոնք էլ քողարկելու նպատակով հաճախ հրապարակ են նետվել եկեղեցական, դոգմատիկական ու կանոնական վիճաբանությունները:

Կոստանդնուպոլսի պատրիարք Նեստորի ու Ալեքսանդրիայի պատրիարք Կյուրեղի աստվածաբանական վիճաբանությունը, համաձայն որոշ տեսակետների, նախապես քաղաքական ուղղվածություն է ունեցել, որն էլ ժամանակի ընթացքում, հիմնականում Կյուրեղ Ալեքսանդրացու ջանքերով վեր է ածվել խոր աստվածաբանական, իսկ ավելի կոնկրետ՝ քրիստոսաբանական վիճաբանությունների[1]: Այդուհանդերձ, պետք է նշել, որ քաղաքական դրդապատճառները դուրս են մեր հետազոտության շրջանակից և փորձելու ենք առավելապես կենտրոնանալ զուտ աստվածաբանական-քրիստոսաբանական վիճաբանությունների շար-

---

[1] Տե՛ս **Chadwick, H.,** "Eucharist and Christology in Nestorian Controversy", Journal of Theological Studies, Oxford, 1951, Vol. II, Part 2, p. 145. Աստվածաբանը մանրամասն ներկայացնում է իր տեսակետը ու այն հիմնավորում նրանով, որ Կոստանդին կայսեր հրահանգով պետք է քննվեին Կյուրեղի դեմ առաջացած որոշակի դժգոհություններ, որոնցից շեղելու նպատակով էլ վերջինս կարողացավ վարժ կերպով օգտագործել քրիստոսաբանական այս վեճը:

ժառիթները, զարգացումները, նրբությունները, եզրահանգումներն ու հետևանքները ուսումնասիրելու վրա:

Նեստորի քրիստոսաբանական տեսակետի համաձայն Քրիստոսի մեջ առկա են երկու տարբեր սեռեր, հետևապես և՝ մարդկային ու աստվածային երկու տարբեր ուսիաներ[1]: Այստեղից էլ տրամաբանորեն կարելի է հետևել, որ աստվածային ու մարդկային տարբեր սեռերը պետք է ունենան համապատասխան բնություններ, իսկ բնություններն էլ իրենց հերթին՝ համապատասխան պրոսոպոններ[2]: Տարբեր պրոսոպոնների մասին իր տեսակետը նա հիմնավորում է աստվածաշնչյան պատմություններով ու պնդում, որ պատմական Հիսուսի գործողությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ նա հանդես է եկել աստվածային ու մարդկային տարբեր պրոսոպոններով:

Նեստորն իր քրիստոսաբանական եզրահանգումները խարսխում էր աստվածաշնչյան մեջբերումներով (Ղուկ. 2:49; Հովի. 11:35; Մարկ. 14:34), որտեղ երևում են Հիսուսի կողմից դրսևորած մարդկային հատկանիշները զգացմունքների տեսքով, ինչն էլ նրա մարդկային բնության պրոսոպոնի ակներև նշաններն են: Համաձայն նրա, մարդկային բնության այս պրոսոպոնային իրականությունը հայտնի է իբրև Հիսուս, ով մարդ էր ծնված Նազարեթ քաղաքում: Միևնույն ժամանակ, Կոստանդուպոլսի պատրիարքը պնդում է, որ Քրիստոսի պատմական կերպարի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հիսուս Քրիստոս լոկ պատմական անձ չէ, այլ նրանում առկա է մարդկայինից արմատականորեն տարբերվող այլ պրոսոպոն, ինչը նրա աստվածային ուսիայի արտահայտությունն է: Այս եզրահանգման հիմը Նեստորի համար նույնպես աստվածաշունչն է, որտեղ առկա վկայությունները ու պատմական փաստերը (Հովի. 6:54; 8:12; 8:58; Մարկ. 5:35; 6:45) ցույց են տալիս, որ սովորական մարդն ի վիճակի չէր կատարել այնպիսի գործողություններ ու հրաշքներ, ինչպիսին կատարեց Քրիստոսը: Նմանատիպ պատումները հիմք են տալիս հետազոտողներին պնդելու, որ մարդկային պրոսոպոնից զատ գործ ունենք նաև աստվածային բնության կամարտահայտության հետ: Վերմարդկային հատկանիշներով օժտված պրոսոպոնը ճանաչվում է հավատքի միջոցով որպես աստվածային Լոգոս: Նեստորի քրիստոսաբա-

---

[1] Հուն.՝ Ousia - էություն, սուբստանց, գոյ, բնություն:

[2] Հուն.՝ Prosopon - տեսանելի երևույթ, որն իրականության արտացոլումն է:

նության համաձայն աստվածաշնչում առկա այս արտաքին նշանները, որոնք հետազոտողին հուշում են երկու իրարից տարբեր իրականությունների, երկու պրոսոպոնների մասին, ինչն էլ իր հերթին խոսում է երկու առանձին բնությունների մասին: Այսպես, համաձայն Նեստորի, Քրիստոսի մասին խոսելիս մենք գործ ունենք բնությունների միասնության, ինչպես նաև մեկ Քրիստոսի մեջ առկա բազմազանության մասին, քանի որ չկան երկու Քրիստոսներ, այլ միայն մեկը իր անքակտելի միության մեջ:

Նեստորի ու Կյուրեղ Ալեքսանդրացու քրիստոսաբանական բանավեճի մեջ խորանալու համար շատ կարևոր է տերմինների ու հասկացությունների լեզվաբանական վերլուծությունը, քանի որ միևնույն եզրը տարբեր իմաստներով գործածելու պարագայում առնչվում ենք միանգամայն տարբեր իրականությունների հետ: Հետաքրքրական է, որ Նեստորի քննադատությունը Կյուրեղի նկատմամբ առաջին հերթին վերաբերում էր հենց նույն տերմինների միաժամանակյա տարբեր գործածությանը, քանի որ այդ պատճառով ստեղծվում էր մի խառնաշփոթ, որն էլ հանգեցնում էր աստվածաբանական տարաձայնությունների ու, երբեմն, ծայրահեղությունների: Իր աստվածաբանական համակարգում Նեստորը ընդունում էր, որ գոյություն ունի մարդ, ով սահմանափակված է իր մարդկային բնությամբ, Աստվածային լոգոսը, ով անսահման իշխանության ու ուժի կրողն է և գոյություն ունի մեկ անձնավորություն, ով կրում է այս երկու տարբեր իրականություններ իր մեջ: Այս իմաստով Նեստորը պնդում էր, որ քրիստոսաբանական վիճաբանությունների ընթացքում պետք է հստակ տարանջատել, թե ում մասին է խոսքը՝ Հիսուսի, Լոգոսի թե Քրիստոսի, քանի որ այս տերմիններից յուրաքանչյուրը ներկայացնում է տարբեր իրականություններ և հնարավոր կլինի խուսափել աստվածաբանական խառնաշփոթից այս տերմինների պատշաճ գործածության պարագայում: Այսինքն, Նեստորը գտնում էր, որ չի կարելի ասել, թե Հիսուսի մեռյալներից հարություն տվեց Ղազարոսին, քանի որ դա վեր էր մարդու ուժերից և աստվածայինի միջամտության շնորհիվ էր, ինչպես նաև չի կարելի պնդել, թե խաչի վրա տառապել է Լոգոսը, քանի որ տառապանքի է արժանացել մարդը, իսկ Աստծու տառապանքը անհեթեթություն է:

Նեստորի քրիստոսաբանական համակարգի համար լիովին մերժելի էին հատկանիշների փոխանակման տեսությունը, որտեղից էլ հաճախ հենց գալիս էին սխալները: Կյուրեղին ուղղված նրա քննադատությունե-

որը հենց վերաբերում էին Հիսուսի, Լոգոսի ու Քրիստոսի հատկանիշները խառնելուն ու հաճախ տերմինների տեղերը շփոթելուն, քանի որ նրա համար առաջնային նշանակություն ուներ երկակի սուբյեկտիվությունը մեկ Քրիստոսի մեջ: Կյուրեղի համար գործում էր ճիշտ հակառակ՝ եզակի սուբյեկտիվության սկզբունքը, որի շրջանակներում էլ բոլոր աստվածային ու մարդկային հատկանիշները վերագրելի էին երկու բնությունների մեկի մեջ միասնականացրած Հիսուս Քրիստոսին: Եվ հենց այս տրամաբանության շրջանակներում էլ Կյուրեղ Ալեքսանդրացին Նեստորին մեղադրում էր Աստվածաշնչի ոգուն հակադրվելու մեջ, քանի որ Հիսուս Քրիստոսի մեկ միասնական բնությունը պահանջում էր պնդել, որ «Աստծո Բանը մահացել է Խաչի վրա», ինչն ամբողջապես անընդունելի էր Նեստորի համար: Փաստորեն, Կոստանդուպոլսի պատրիարք Նեստորի ու Ալեքսանդրիայի պատրիարք Կյուրեղի հակադրության մեջ գործ ունենք միանգամայն տարբեր երկու աստվածաբանական-քրիստոսաբանական համակարգերի հետ, որոնց հակադրությունը ոչ միայն բնական էր, այլ նաև տրամաբանական:

Նեստորի քրիստոսաբանական համակարգում լեզուն ու լեզվաբանությունը ունեին վճռորոշ նշանակություն: Այսպես, նա գտնում էր, որ «Աստծուն փաթաթեցին բարուրի մեջ» միանգամային աստվածանարգություն է, քանի որ դրա փոխարեն պետք է գործածվի «Հիսուսին փաթաթեցին բարուրի մեջ» արտահայտությունը[1]: Եթե Աստվածային Լոգոսը դառնում է ենթակա մարդկային տառապանքների, ապա այս մոտեցումն ուղղակիորեն կամ անուղղակի ձևով հանգեցնում էր հերետիկոսության: Բոլոր նմանատիպ մոտեցումները Նեստորը համարում էր հակաաստվածաշնչյան ի տարբերություն Կյուրեղի, ով նման մոտեցումները կապում էր մարմնավորման դոգմայի հետ: Չնայած առկա հակասություններին Կյուրեղն ու Նեստորը համակարծիք էին նրանում, որ մեկնաբանության կանոններն ու օրենքները մեծ կարևորություն ու նշանակություն ունեն: Մեկնաբանության նկատմամբ տածած զույգ աստվածաբանների վերաբերմունքն առավել հստակ ձևակերպում է ստանում աստվածածին կամ թեոտոկոս եզրի շուրջ ծավալված բանավեճի ժամանակ:

Կյուրեղի քրիստոսաբանության համաձայն «Աստվածամայրը» հանդիսանում էր այն վարդապետության առանցքը, համաձայն որի աստվա-

---

[11] Տե՛ս Nestorius, Book of Heraclides, 59, Nau, p. 37:

ծային Բանը մարմնավորման բոլոր գործողությունների ուղղակի ու միակ սուբյեկտն էր: Նեստորի համար այս մոտեցումն աստվածաբանական տեսանկյունից ամբողջապես սխալ է, որտեղ ոչ աստվածաշնչական լեզվի գործածումը շեղում է քրիստոսաբանական ուղղադավանության ուղուց: Նրա կարծիքով Աստվածամայրը մարդածին էր կամ անթրոպոտոկոս, իսկ որդեգրման առումով՝ նաև աստվածածին[1]: Նրան, սակայն, աստվածածին կոչելու համար պետք է մի ամբողջ աստվածաբանական բացատրություն տրվեր:

Անդրադառնալով հատկանիշների փոխանակման (communication idiomatum) հարցին՝ Նեստորը նշում է, որ յուրաքանչյուր բնության պրոսոպոնին պետք է վերագրվեն միայն իրեն բնորոշ հատկանիշները և այդ առանձին հատկանիշները որևէ կերպ չի կարելի վերագրել Քրիստոսի «պրոսոպոնային միությանը»[2]: Նեստորի այս մոտեցումը մեծ քննադատության արժանացավ Կյուրեղի կողմից, քանի որ վերջինս պնդում էր, որ Նեստորի համար բնությունների միությունը ոչ թե ռեալ, իրական իրողություն է, այլ վիրտուալ լեզվական մի խաղ, որտեղ նա վերբալ մակարդակում ստեղծում է մարդ Հիսուսի ու Աստծո Բանի կարծեցյալ մի միություն: Նման մոտեցման համար Կյուրեղն օգտագործում է Նեստորի այն խոսքերը, որ «ամբողջ Կտակարանում չեն գտնի որևէ տեղ, երբ մահ է վերագրված Աստծուն, Քրիստոսին կամ Տիրոջը» և որ Քրիստոսի մասին նորկտակարանային հատվածներում օգտագործվող եզրերը նպատակ ունեն ցույց տալու Քրիստոսի երկու բնությունները[3]:

Նեստորը որևէ կերպ չի համաձայնում ալեքսանդրյան աստվածաբանության այն մոտեցմանը, համաձայն որի նախագո Աստծո Բանը իջել է երկիր, տանջվել, տառապել, մահացել հանուն մարդկության փրկության: Իր հերթին Նեստորը, հավատարիմ մնալով անտիոքյան քրիստոսաբանությանը, նշում է, որ նույնիսկ հայերն իրենց գրվածքներում հիմնականում նշում են Քրիստոսի անունը՝ դրանով իսկ մատնանշելով երկու բնությունների միությունը[4]: Պետք է նշել, որ իր աստվածաբանության ու, մասնավորապես, քրիստոսաբանության համար ելակետ ընդունելով

---

1 Տե՛ս Loofs, 1905, p. 167, 181, 191:

2 McGuckin, J. էջ 155.

3 Loofs, 1905 , էջ 269.

4 Նույն տեղում, էջ 295:

Քրիստոս անվան որպես երկու բնությունների միության վկայությունը, նա իրենց դնում է յուրահատուկ աքսիոմատիկ շրջանակի մեջ՝ մերժելով ընդունել դրանից դուրս առկա որևէ այլ իրողություն: Համաձայն Նեստորի Քրիստոս անվանումը իր մեջ պարունակում է երկու բնությունների միությունը, ինչը, սակայն, ոչ այլ ինչ է, քան պարզ աստվածաբանական եզրահանգում, որը միշտ կարելի է կասկածի տակ առնել ու քննադատության ենթարկել: Այստեղից էլ նրա «պրոսոպոնային միության» վերաբերյալ եզրահանգումը, որով նա փորձում է «փրկելե Փրկչի ,պրոսոպոնային միությունը» ու միակությունը՝ անտիոքյան այլ աստվածաբանների նման չհանգելու ,երկու որդիե կամ ,երկու Քրիստոսե տեսանկյուններին:

Նեստորի քրիստոսաբանական համակարգի կենտրոնական գաղափարներից էր այն, որ քրիստոսաբանական բոլոր եզրահանգումների հիմքում պետք է ընկած լինի Քրիստոսի զույգ իրականությունների վերաբերյալ եկեղեցու ունեցած փորձառությունը: Կյուրեղի պարագայում խնդիրը ճիշտ հակառակն էր: Նա գտնում էր, որ քրիստոսաբանական քննարկումները չպետք է սկսել Հիսուս մարդուց, քանի որ նման մոտեցումը հանգեցնում է որդեգրականության և ոչ էլ աստվածային Լոգոսից, քանի որ դա էլ հանգեցնում է ապոլինարականության կամ երևութականության: Կյուրեղին ուղղված իր քննադատության մեջ նա մեղադրում է վերջինիս սխալ ելակետների ընտրության ու սխալ արդյունքների հասնելու մեջ, քանի որ ելակետ պետք է լինի Քրիստոս, ում մեջ «երևում են աստվածային Լոգոսի հավիտենական ու անմահ բնութագրիչները, ինչպես նաև բոլոր մարդկային հատկանիշները, որոնք մահկանացու են ու արարված»[1]: Նեստորի կարծիքով այլ ելակետերից քննարկվող քրիստոսաբանությունը հղի է բազմաթիվ սխալներով, որոնք կասկածի տակ են դնում ոչ միայն քրիստոնեական բազմաթիվ դոգմաները, այլ նաև փրկության ողջ քրիստոնեական հայեցակարգը:

Այսպիսով, Նեստորի քրիստոսաբանական համակարգը բնորոշվում էր միասնական պրոսոպոնով, որի արտաքին կամ երևացող կողմն էր ի դեմ Քրիստոսի: Հավատքի միջոցով Քրիստոսի մեջ կարելի է ճանաչել երկու իրականություններ՝ աստվածային բնությունը ի դեմս աստվածային Լոգոսի և մարդկային բնությունը՝ ի դեմս Հիսուսի: Հետևաբար, այս երկու բնությունների առկայության պայմաններում Քրիստոս ունի

[1] Book of Heraclides 225; Nau p. 136.

մեկ միասնական պրոսոպոն: Միևնույն ժամանակ հավատքով Քրիստոսի մեջ ճանաչվում են նրա երկու բնություններին բնորոշ երկու պրոսպոնները: Այլ խոսքերով Քրիստոսը ոչ Լոգոսն է և ոչ էլ Հիսուսը, այլ այդ երկուսը միևնույն ժամանակ իր միասնական պրոսոպոնով: Միևնույն ժամանակ նա համարում է, որ Քրիստոսին չի կարելի վերագրել այն հատկանիշներն ու բնութագրիչները, որոնք առանձին-առանձին բնութագրում են աստվածային Լոգոսին ու մարդ Հիսուսին, այլ միասնական պրոսոպոնի հատկանիշները հանդիսանում են այդ երկուսի յուրօրինակ միավորման արդյունքում ձևավորված նոր հատկանիշներն ու բնութագրիչները:

Նման բարդ քրիստոսաբանական համակարգի ճիշտ ընկալման ու ավոլորդ եզրահանգումների մեջ չընկնելու համար անհրաժեշտ է գիտակցել ճշգրիտ հերմենևտիկ մոտեցման կարևորությունը Նեստորի քրիստոսաբանական համակարգի նկատմամբ: Դրանով են երկբնակության կողմնակից հեղինակները բացատրում այն հանգամանքը, որ Նեստորը հաճախ աշխատում էր հեռու մնալ եպիսկոպոսական ժողովներում կամ հրապարակային հարթության մեջ իր մոտեցումները քննարկելուց, քանի որ կասկածներ ուներ նրանց հերմենևտիկական հավաքական գիտելիքների վրա[1]: Ի տարբերություն Նեստորի՝ Կյուրեղ Ալեքսանդրացին հարցը հիմնականում քննարկում էր հրապարակային հարթության մեջ, որովհետև մի կողմից վստահ էր իր ճշմարտացիության մեջ, մյուս կողմից առավել լավ էր տիրապետում լսարանի վրա ազդելու հռետորական մեթոդներին: Մյուս կողմից նման հրապարակային քննարկումները չէին նպաստում Նեստորի վարկանիշի աճին ու քրիստոսաբանական համակարգի ընկալելիության մակարդակին, քանի որ նրա աստվածաբանական բարդ լեզուն հաճախ չէր ընկալում լայն զանգվածների կողմից, երբեմն տեղիք տալիս սխալ մեկնաբանությունների ու հենց այդ բարդությունն էր, որ ի վերջո հանգեցրեց դատապարտության ու աքսորի:

Նեստորի քրիստոսաբանական համակարգի սխալ ընկալվածությանն առաջին հերթին նպաստեց իր կողմից միևնույն՝ պրոսոպոն տերմինի գործածությունը տարբեր երևույթներ բնորոշելու համար: Մի կողմից, նա օգտագործում է պրոսոպոն եզրը Հիսուսի մարդկային ու Լոգոսի աստվածային բնությունները բնութագրելու համար, իսկ մյուս կողմից նա

---

[1] McGukin, p. 158.

պրոսոպոն եզրը օգտագործում է Քրիստոսի միասնական բնությունը բնութագրելու համար: Աստվածաբանությունից մեծ գիտելիք չունեցողների շրջանում բնական հարց է առաջանում, թե ինչպես կարող է Քրիստոս ունենալ մեկ միասնական պրոսպոնո, բայց միևնույն ժամանակ ունենալ նաև երկու պրոսոպոն, քանի որ Հիսուսն ու Լոգոսն ունեն իրենց առանձին պրոսոպոնները: Երկու պրոսոպոնների վերաբերյալ նրա տեսությունը հանգեցրեց նրան, որ Կյուրեղը Նեստորին մեղադրել Դիոդորոս Տարսոնացու «երկու որդիների» տեսությունը թաքնված կերպով առաջ տանելու մեջ: Նման քննադատությունը մեծ ընդունելություն արժանացավ Նեստորի գաղափարներն չընկալած ու նրան հակառակ զանգվածների կողմից, ինչն էլ, ի վերջո, հանգեցրեց նրա կործանմանը:

Իր տեսակետը խորացնելու և առավել հիմնավորելու համար Նեստորը փորձում էր իր գաղափարները ամրագրել նախորդ շրջանի հայրերի գրվածքներով, որոնց ամենաակներևը Գրիգոր Նազիազանցին (Աստվածաբան) էր: Կապադովկիան աստվածաբանի «երկու բնությունների տարբերակումը» հող նախապատրաստեց Նեստորի քրիստոսաբանությունը հիմնավորելու համար, քանի որ Նազիազանցու տեսակետի համաձայն «Քրիստոսի մեջ առկա է աստվածություն ու մարդկայնություն ու այդ երկու տարբեր իրողությունները Քրիստոսի մեջ չեն հանգեցնում երկու տարբեր ինքնությունների ձևավորման (allos kai allos)»: Նեստորի անհամաձայնությունը Գրիգոր Նազիազանցու հետ նրանումն էր, որ վերջինս բնությունների միավորման համար օգտագործում էր ,միախառնումե եզրը, ինչին կտրուկ հակադրվում էր Նեստորը: Նրա կարծիքով միասնական Քրիստոսի մեջ կարելի է տարբերակել երկու բնություններն էլ, քանի որ նրանք միավորումից հետո չեն կորցրել իրենց հատկանիշները[1]: որը[1]: Չնայած նրան, որ Նեստորը մերժում էր բոլոր տեսակի մեղադրանքները երկսուբյեկտ քրիստոսաբանություն առաջ քաշելու մասին, այնուամենայնիվ նրա հակառակորդների ջանքերով «պրոսոպոնային միությունը» ընկալվեց իբրև երրորդ պրոսոպոն, որի առաջ գալու շարժառիթը նրա կողմից գործածված ոչ բավարար տերմինաբանությունն էր ու բարդ լեզուն[2]:

---

[1] Տե՛ս Loofs, 1905, p. 280:

[2] Տե՛ս Loofs, 1905, p. 77f:

ՆԵՍՏՈՐԻ ՊՐՈՍՈՊՈՆԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎՆ ԻԲՐԵՎ ՆՐԱ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐ

Հովհաննես Հովհաննիսյան

Բանալի բառեր *- քրիստոսաբանություն, Նեստոր, պրոսոպոն, Կյուրեղ Ալեքսանդրացի, Լոգոս, բնությունների միություն*

Հոդվածը վերլուծության է ենթարկում Նեստորի քրիստոսաբանության պրոսոպոնային միության տեսակետը և փորձում է ցույց տալ, որ պրոսոպոնային միությունը հանդիսանում է նրա քրիստոսաբանական համակարգի անկյունքարը: Հեղինակը ցույց է տալիս, որ պրոսոպոնային միությունը սխալ է ընկալվել ժամանակակից աստվածաբանների կողմից և նրանցից ոմանք նշում են, որ պրոսոպոնային միության արդյունքում ձևավորվել է նոր՝ երրորդ պրոսոպոն: Հոդվածը վերլուծում է պրոսոպոն եզրը և ցույց է տալիս նրա բարդ բնույթը, որը և հանգեցրել է սխալ տերմինի ընկման ու մեկնաբանման: Հեղինակը վերլուծում է պրոսոպոն եզրի նեստորյան ընկալումը և թե ինչու Կյուրեղ Ալեքսանդրացին հակադրվեց նրա պրոսոպոնային միության բանաձևին:

ФОРМУЛА ПРОСОПОНСКОГО СОЮЗА НЕСТОРИЯ КАК ФУНДАМЕНТ ДЛЯ ЕГО ХРИСТОЛОГИИ

Оганнес Оганнисян

Ключевые слова *- христология, Нестор, просопон, Кирилл Александрийский, Логос, союз, природ*

В статье анализируется просопонский союз христологии Нестория и показывается, что его идея просопонского союза является краеугольным камнем для его христологии. Автор показывает, как теория о просопонского союза был неправильно понят современными богословами и некоторые из них отмечают, что просопонский союз сформировал новый, третий просопон. В статье анализируется термин просопон и показывается, что комплексный характер термина привели к неправильному представлению и неправильного толкования этого термина. Автор анализирует несторская восприятия термина просопон и анализирует, почему Кирилл Александрийский противодействовал его представлениям о просопонского союза.

NESTOR'S APPROACH ON PROSOPIC THEORY AS CORNERSTONE FOR HIS CHRISTOLOGY

Hovhannes Hovhannisyan

Keywords: *Christology, Nestor, prosopon, Cyril of Alexandria, Logos, union of natures*

The article analysis the prosopic theory of Nestor's Christology trying to reveal that his idea of proposic union is the cornerstone for his Christology. The author shows how the prosopic theory was misunderstood by the contemporary theologians and some of them mentioned that the prosopic union formed a new prosopon, so making the third one. The article analyzes the term prosopon and shows that the complex nature of the term brought to the misconception and misinterpretation of the term. The author analyzes the Nestor's perception of the term prosopon and analyzes why the Cyril of Alexandria contradicted to his ideas on the prosopic union.